

# Գեղարքունիքի և Կոտայքի մարզպետներն այցելել են հյուսիս-արևելյան գորամիավորումներ

12.09.2017

Սեպտեմբերի 12-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանը և Կոտայքի մարզպետ Կարապետ Գուլոյանը, իրենց իսկ նախաձեռնությամբ, երկու մարզերի թվով 12 քաղաքային համայնքների ղեկավարների հետ եղել են ՀՀ զինված ուժերի հյուսիս-արևելյան գորամիավորումներից մեկում և այցելել առաջնագծի տարբեր հատվածներ:

Հրամանատարության հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ մարզպետները և համայնքների ղեկավարներն առանձին-առանձին այցելել են տարբեր մարտական դիրքեր, ինչը թույլ է տվել լինել հնարավորինս շատ հենակետերում և ծանոթանալ մարտական հերթապահություն իրականացնող զինվորականների կենցաղային և այլ պայմաններին:

Այցի ընթացքում երկու մարզպետներն էլ նշել են, որ պատրաստ են ավանդական դարձնել այս նախաձեռնությունը, քանզի, ըստ բանախոսների, այն ավելի սերտ է դարձնում տեղական իշխանություններ-բանակ կապը: Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանը մասնավորապես շեշտել է, որ թե որպես սահմանամերձ մարզի ղեկավար, թե որպես սահմանամերձ ու պատերազմ տեսած համայնքում ծնված մարդ, շատ է կարևորում համայնքների և մարտական հերթապահություն կրող գորամասերի միջև կապի առկայությունը, քանզի հակառակորդի հնարավոր սադրանքների դեպքում սահմանամերձ բնակավայրերում ապրող մարդիկ ինչպես նախկինում, այնպես էլ այսօր, պարտավոր են կանգնել Հայրենիքի պաշտպանների կողքին: Իր հերթին Կարապետ Գուլոյանն էլ նշեց, որ չնայած Կոտայքը չի համարվում սահմանամերձ մարզ, սակայն, որպես մարզպետ և որպես անհատ, ամեն պահ պատրաստ է իր լիազորությունների և հնարավորությունների շրջանակներում կանգնել բանակի կողքին:

Շրջայցի ավարտին մարզպետներն ու համայնքների ղեկավարները բանակային կորպուսի հրամանատարների հետ կիսվել են իրենց տպավորություններով, նշելով, որ հաճելի է տեսնել անընդհատ կատարելագործվող առաջնագիծ ու մարտական բարձր ոգի ունեցող զինվորներ: